Աշխատանքների կատարման Պայմանագիր № 11-12	**Contract of Works № 11-12**
Այս պայմանագիրը (այսուհետ «Պայմանագիր») կնքվում է 2025 թվականի հոկտեմբերի 12-ին Երևանում:	This contract (hereinafter referred to as the "Contract") is executed on October 12, 2025 in Yerevan
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ալվինա Աբաջյանի, ով գործում է կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**) և	**"ContourGlobal Hydro Cascade" CJSC**, represented by Alvina Abajyan in her capacity of General Manager, acting on the authorities given to her by the Company Charter, hereinafter referred to as **Client,** and
«Գլոբալ Էներջի Գրուպ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Լյուդմիլա Շենդրիկի, ով գործում է կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա (այսուհետ՝ **Կապալառու**) հետևյալի մասին.	**"Global Energy Group" LLC**, represented by Liudmyla Shendryk, in her capacity of Director, acting on the authorities given her by the Company Charter, hereinafter referred to as **"Contractor"** for the following:
Սահմանումներ	**Definitions**
Աշխատանք՝ ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 1.1 կետում. **Տեխնիկական բնութագիր և Նախագիծ**՝ Աշխատանքի կատարմանը Պատվիրատուի կողմից ներկայացվող և պարտադրվող տեխնիկական պահանջներ և պայմաններ, որոնք սահմանված են Հավելված 2-ում. **Գնային առաջարկ** – Աշխատանքի մանրամասն ֆինանսական բացվածք նկարագրված Հավելված 3-ում. **Գաղտնի Տեղեկատվություն (առևտրային գաղտնիք)**՝ անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առևտրային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և Պատվիրատուն միջոցներ է ձեռնարկում այդ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար: **Փոխկապակցված անձ** նշանակում է ցանկացած անձ, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեկ կամ մի քանի ածանցյալ անձանց միջոցով վերահսկում է կամ գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ այդ անձի հետ: «Վերահսկում» տերմինը (ներառյալ «վերահսկող», «վերահսկվող» և «ընդհանուր վերահսկողության տակ» տերմինները) նշանակում է՝ ուղղակի կամ անուղղակի իշխանություն ունենալ անձի կառավարման և քաղաքականության ուղղության նկատմամբ քվեարկող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու, պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ: Այս սահմանման նպատակներով Ընկերության դուստր ձեռնարկությունը նշանակում է միայն	**Work** – as defined in Clause 1.1 of this Contract. **Technical Specification and Design**– technical requirements and conditions submitted and mandated by the Client for performance of the Work defined in Annex 2; **Price offer**– detailed price breakdown of the Work defined in Annex 3; **Confidential Information (trade secret)** - regardless of the form any technical, financial, organizational, commercial and any other information concerning the Client and its activity which is unknown to third persons and by virtue of its being unknown has an actual or potential commercial value and the Client takes measures for the defense of its confidentiality. "**Affiliate**" of any person means any other person that, directly or indirectly through one or more intermediaries, controls, is controlled by or is under common control with that person. The term "control" (including the terms "controlling," "controlled by" and "under common control with") means the possession, direct or indirect, of the power to direct or cause the direction of the management and policies of a person, whether through the ownership of voting securities, by contract or otherwise. For purposes of this definition, Affiliate of the Client means only ContourGlobal limited and any

ContourGlobal limited և գանկացած դուստր ձեռնարկություն: **Երաշխիքային ժամկետ** - ժամկետ, որի ընթացքում Կապալառուն պարտավորվում է Աշխատանքի հետ կապված Թերությունների հայտ գալու դեպքում վերացնել դրանք՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով. **Թերություններ՝** Աշխատանքի թերություն և/կամ անհամապատասխանություն(ներ) սույն Պայմանագրով սահմանված Օգտագործման Նպատակին և/կամ սույն Պայմանագրին և/կամ կիրառվող օրենսդրության պահանջներին և/կամ սովորաբար այդպիսի Աշխատանքներին ներկայացվող պահանջներին և/կամ սույն Պայմանագրի Հավելված 2-ում ներկայացված Աշխատանքի բնութագրին, տեխնիկական պահանջներին և նախագծին: **Լիազորված ներկայացուցիչ**- նշանակում է անձ /անձինք/, ովքեր լիազորված են ներկայացնելու Կողմին սույն Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում: Ներկայացուցիչների փոփոխման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել վերջիններիս իրավասությունը հավաստող փաստաթղթեր:	subsidiaries. **Warranty Period-** the period of time during which in case Deficiencies arise in regard with the Works, the Contractor shall eliminate such Deficiencies as set forth by the present Contract. **Deficiencies** - any default and/or defect and/or malfunctioning and/or non-compliance(s) of the Works to the Purpose defined by this Contract and/or to applicable legislation requirements and/or to requirements which are usually presented to such Works and/or to the technical characteristics and technical requirements and design, as defined in Annex 2 of this Agreement. **Authorized Representative-** means the person (persons) authorized to represent the Party during the signature and performance of this Contract. In case the authorized representative is changed the new representative should provide documents to certify its authorities.
1. Պայմանագրի Առարկան	**1. Subject of the Contract**
1.1 Սույն Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կապալառուն համաձայնում է կատարել Տոլորսի ջրամբարի ջրընդունիչի ճաղավանդակի մաքրող համակարգի վերազինման աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք) սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ում և Հավելված 3-ում ներկայացված Տեխնիկական բնութագրի, Նախագծի և Գնային առաջարկի հիման վրա, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքը և վճարել համաձայն Պայմանագրի:	1.1 Under the provisions of this Contract the Client assigns and the Contractor accepts to perform Modemization of the trash rack cleaning system at the intake structure of Tolors Reservoir (the Work) based on terms of Technical Specification , Design and Price offer appended to this Contract as Annex 2 and Annex 3, which are an integral part hereof, and the Client shall accept the Work and pay for the Work as per this Contract.
2. Կապալառուի երաշխավորությունները	**2. Contractor's representations and warranties**
2.1 Կապալառուն երաշխավորում է, որ ունի սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և լիցենզիաները, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ:	2.1 The Contractor warrants that it has all permissions and licenses required by legislation of Armenia necessary for performance of the Work, defined in this Contract.
2.2 Կապալառուն երաշխավորում և պարտավորվում է Աշխատանքը կատարել ժամանակին, պատշաճ ձևով, բարձր որակով և պրոֆեսիոնալ մակարդակով՝ համաձայն սույն Պայմանագրի, ՀՀ օրենսդրության, Պատվիրատուի ցուցումների, պահանջների և արժեքների:	2.2 The Contractor warrants and undertakes to perform the Work in time, properly, with high quality and professional level, in accordance with this Contract, legislation of Armenia and the instructions and requirements of the Client.

2.3 Կապալառուն կրում է կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև Պատվիրատուի կողմից այն ընդունելը:	2.3 The Contractor bears the risk of accidental loss or injury of work result until the acceptance by the Client.
3. Տարածք Մուտք	**3. Access to Site**
3.1 Պատվիրատուն պարտավոր է տրամադրել Կապալառուին և նրա աշխատակիցներին բոլոր անհրաժեշտ լիազորությունները ապահովելու համար իրենց մուտքը Պատվիրատուի տարածք: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին առնվազն 24 ժամ առաջ տեղյակ պահել նման մուտքի անհրաժեշտության մասին:	3.1 The Client shall provide all necessary authorizations to the Contractor and its Employees to ensure their access to the Client site. The Contractor shall inform the Client about the necessity of such access at least 24 hours before.
3.2 Կապալառուն պարտավոր է տրամադրել այն աշխատակիցների ցանկը, որոնք պետք է մուտք գործեն շինարարության տարածք Պայմանագրի գործողության ողջ տարածքում:	3.2 The Contractor shall provide the list of its Employees which shall have access to the construction site during the whole duration of this Contract.
4. Գինը և Վճարումը	**4. Price and Payment**
4.1 Աշխատանքի համար Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 214,588 (երկու հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր ութսուն ութ) ԱՄՆ դոլար: Կապալառուն պետք է տրամադրի հարկային ռեզիդենտության վկայագիրը	4.1 The total price of the Contract for the Work constitutes USD 214,588 (two hundred fourteen thousand five hundred eighty eight). The Contractor shall provide Tax residency certificate..
4.2 Կապալառուի գնային առաջարկում ներառված, Հավելված 3-ում ներկայացված միավորի գները գործում են սույն պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում և ենթակա չեն փոփոխության:	4.2 The unit prices fixed in Annex 3 are valid for the whole term of this Contract and are not subject to change.
4.3 Աշխատանքի համար վճարումը կատարվում է հետևյալ կերպ. - Պայմանագրի 4.1 կետով սահմանված 20% վճարվում է որպես կանխավճար՝ Պայմանագրի երկկողմանի ստորագրման պահից 30 /երեսուն/ օրացուցային օրվա ընթացքում՝ Կապալառուի ներկայացրած կանխավճարի հաշիվ-ապրանքագրի և բանկային երաշխիքի հիման վրա: - Պայմանագրի արժեքի մնացած 75%-ը վճարվում է կատարված Աշխատանքի համար հաշիվ-ապրանքագիրը և վերջնական ընդունման-հանձնման ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: - Յուրաքանչյուր միջանկյալ կատարողական ակտի հիման վրա վճարվող գումարից Պատվիրատուն պահում է գումարի 5%-ը: Որպես Պայմանագրի 7.4 կետով սահմանված երաշխիքային ժամկետի ապահովում՝ Պատվիրատուն իրականացնում է հետևյալ	4.3 The payment for the Work is done as follows: - The 20% amount set in paragraph 4.1 of the Contract is paid as advance payment within 30 /thirty/ calendar days from the moment of bilateral signing of the Contract, based on the advance payment invoice and bank guarantee submitted by the Contractor. - the remaining 75% of the Contract price shall be paid for the Work done within 30 /thirty/ calendar days from the date of the bilateral signature of the invoice and Final Acceptance Protocol. - The retention of 5% of the amount paid for the interim performance acts will be held by the Client: The Client will hold as a security fee until the end of warranty period set forth in Clause 7.4 of the

տարբերակներից որևէ մեկը Կապալառուի ընտրությամբ՝ Պայմանագրի գնի 5%-ը պահում և վճարում է 18 ամիս երաշխիքային ժամկետի ավարտից հետո՝ 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, **կամ** - Կապալառուն ներկայացնում է Պայմանագրի գնի 5%-ին համարժեք բանկային երաշխիք, որը Պատվիրատուն պահում է և ազատում է 18 ամիս երաշխիքային ժամկետի ավարտից հետո՝ 5 (հինգ) օրվա ընթացքում: Բանկային երաշխիքը չի կարող տրամադրվել ՌԴ բանկի կամ դրա հետ փոխկապակցված բանկի կողմից:	Contract one of the followings as agreed with Contractor: -5% of the Contract price will be hold and will be paid within 30 (thirty) calendar days after the end of 18 months warranty period, **or** - the Contractor provides a Bank guarantee in the sum of the 5% of the Contract price which the Client will hold and will release in 5 (five) calendar days after the end of 18 months warranty period. Bank guarantee cannot be issued by the Russian bank or affiliated bank.
4.4 Բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ԱՄՆ դոլարով:	4.4 All payments shall be made via bank transfers in USD.
4.5 Հավելված 2-ում նախատեսված ծավալից մինչև 10 տոկոսի չափով ավելացման անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել Հավելված 2-ը: Փոփոխման հայտի իրագործումը պետք է իրականացվի հետևյալ կերպ՝ Կապալառուն պետք է խորհրդատվություն տրամադրի Պատվիրատուին և Կողմերը երկկողմանի բանակցություններ վարեն լրացուցիչ ծախսերի և աշխատանքների կատարման ժամկետի և պայմանագրի գնի փոփոխության վերաբերյալ: Այնուհետև, Պատվիրատուն կարող է հայցել Փոփոխման հայտ, իսկ Կապալառուն պարտավոր է այդպիսի հայտը ստանալու պահից տասնչորս (14) օրվա ընթացքում ուղարկել գրավոր առարկություններ ցանկացած ժամկետի կամ պայմանի վերաբերյալ, ներառյալ նման փոփոխության լրացուցիչ հաշվարկը և նախահաշիվը՝ հաշվի առնելով այդպիսի փոփոխության ազդեցությունը աշխատանքների վրա, կատարման ժամկետի վրա և այլ համաձայնեցված և ստորագրված փոփոխման հայտերի վրա: Կապալառուի կողմից տասնչորս (14) օրվա ընթացքում որևէ առարկություն չներկայացնելը համարվում է փոփոխման հայտով նախատեսված բոլոր պայմանների և պայմանների հաստատում: Պատվիրատուն պետք է ուսումնասիրի Կապալառուի նախահաշիվը, և եթե այն ընդունելի է, կամ Կողմերը այլ կերպ համաձայնում են փոփոխման հայտին, ապա այդ ձևը հաստատվում է Պատվիրատուի կողմից, և Կողմերը ըստ այդմ փոփոխում են Աշխատանքների	4.5 In case of volume increase of Work provided in the Annex 2 of not more than 10%, the Parties must execute a VO and amendment of the Annex 2. The process of execution of VO must be as follows: Client shall notify the Contractor, and both parties shall consult concerning the estimated cost and impact on the time for completion, and the Contract price as the case may be. Client may request any such Variation to the scope of the Contract, and Contractor shall within fourteen (14) days of receipt of such request send any written objections to any term or condition, including the calculation of additional remuneration payable for such Variation and shall prepare, a detailed estimate of the cost of such change, taking into account the effect of such change on the Work, the Time for Completion and other agreed upon and contemplated Variation Orders. Failure by Contractor to deliver any objection within fourteen (14) days shall be deemed as approval of all of the terms and conditions set forth in the Variation Order. Client shall review Contractor's estimate, and if Client accepts or the Parties otherwise agree as to the Variation Order, such form shall be endorsed in writing by the Client and the Parties shall

կատարման ժամկետը և Պայմանագրի գինը, ինչպես նաև այլ վերաբերելի Հավելվածներ, որոնք պահանջում են ճշգրտում՝ փոփոխության կարգը արտացոլելու համար:	promptly adjust the Time for Completion and the Contract price as the case may be and any of the Annexes requiring adjustment to reflect the Change Order.
5. Աշխատանքի Կատարումը	**5. Work Performance**
5.1 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին, Հավելված 2-ին, 3-ին և 4-ին, Աշխատանքի կատարման ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին և ցուցումներին, ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև սովորաբար և անվերապահորեն նման Աշխատանքի կատարմանը ներկայացվող նորմերին, կանոնների և ստանդարտներին համապատասխան:	5.1 The Contractor shall perform the Work in accordance with this Contract, Annex 2, 3 and 4 the requirements and instructions presented by the Client during the Work performance, the legislation of Armenia and the norms, rules and standards generally and absolutely presented for performance of such Work.
5.2 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ:	5.2 The Contractor shall perform the Work personally.
5.2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:	5.2.1 The Work is carried out by the Contractor's means, materials and funds.
5.2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:	5.2.2 Contractor shall be responsible for the quality of the materials and equipment provided.
5.3 Կապալառուն չի կարող, առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, զիջել կամ փոխանցել սույն Պայմանագիրը կամ սույն Պայմանագրով նախատեսված որևէ իրավունք (ներառյալ, առանց սահմանափակումների, փոխհատուցման իրավունքը) և ցանկացած նման պայմանագիր կամ համաձայնություն, որին Պատվիրատուն իր համաձայնությունը չի տվել իրավաբանական ուժ չի ունենա վերջինիս համար:	5.3 Contractor may not, without Client's prior written consent, assign, transfer or hypothecate this Agreement or any interest in this Agreement (including, without limitation, any right to the payment of any compensation payable pursuant to this Agreement), and no purported assignment, transfer or hypothecation will be effective or enforceable, as against Client.
5.4 Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության Կապալառուն իրավունք չունի կնքել որևէ պայմանագիր որևէ ենթակապալառուի հետ, ներառյալ ցանկացած գործակալության, խորհրդատվության կամ ներկայացուցչական պայմանագիր կնքելու միջոցով, և ցանկացած նման պայմանագիր, որին Պատվիրատուն իր համաձայնությունը չի տվել իրավաբանական ուժ չի ունենա վերջինիս համար: Բոլոր հաստատված ենթակապալառուի պայմանագրերը պետք է պարունակեն սույն գլխի դրույթները:	5.4 Contractor may not subcontract for any of the Services to be provided pursuant to this Agreement, including by way of any agency, consulting, or other representative agreement, without Client's prior written consent, and any purported subcontracting to which Client has not so consented will not be effective or enforceable as against Client. All approved subcontracts shall contain provisions substantially identical to those contained in this Agreement.
5.5 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս պահպանել շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության կանոնները և այլ պարտադիր պահանջներն ու նորմերը, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Պատվիրատուի կողմից սահմանված Աշխատանքի և	5.5 The Contractor shall comply to all environmental, health and work safety and other mandatory requirements and norms provided by the legislation of Armenia and Health and Safety Policy set by the Contractor (Annex 4) when performing the Work.

Անվտանգության ապահովման պահանջներով (Հավելված 4): Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Աշխատանքի կատարման ժամանակ կամ դրա հետ կապված Կապալառուի աշխատողներին և/կամ երրորդ անձանց և/կամ Կապալառուի և/կամ երրորդ անձանց գույքին պատճառված վնասի համար: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին անմիջապես տեղեկացնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործություն ունեցող կամ առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները խախտող յուրաքանչյուր պատահարի մասին, ինչպես նաև վերջինիս ներկայացնել գրավոր զեկույց նման պատահարների վերաբերյալ, պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր հետո:	The Client shall not be responsible for the damages caused to Contractor's employees and/or third persons and/or the property of third persons during performance of the Work or related to it. The Contractor shall inform immediately the Client for each occurred incident which has negative effect on the environment or breaches the health and safety requirement as well as shall submit a written report to Client for such incident not later that one business day as from its occurrence.
5.6 Կապալառուն պարտավոր է մինչև Աշխատանքը սկսելը առնվազն 48 (քառասունութ) ժամ առաջ տեղեկացնել Պատվիրատուին Աշխատանքը սկսելու մասին և Պատվիրատուին ներկայացնել Աշխատանքը կատարելու հստակ և մանրամասն ժամանակացույց:	5.6 The Contractor shall inform the Client at least 48 (forty-eight) hours prior to start of the Work and provide a clear and detailed schedule of Work.
5.7 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարելիս Կապալառուն և Կապալառուի աշխատակիցները ներկայացնում են Պատվիրատուին և հետևաբար պետք է գործեն բարձր պրոֆեսիոնալ կերպով, Պատվիրատուի շահերից ելնելով, բարեխղճորեն և ողջամտորեն:	5.7 When performing the Work defined in this Contract, the Contractor and the Contractor's Employees represent the Client, thus they shall act in highly professional way, for the interests of the Client, in good faith and reasonably.
5.8 Աշխատանքը կատարելիս Կապալառուն պարտավորվում է գործի դնել նման կապալառուի ամբողջ ողջամիտ ուշադրությունը և հմտությունները՝ նման Աշխատանքի կատարման համար ընդունված ընդհանուր ստանդարտներին համապատասխան:	5.8 When performing the Work, the Contractor shall use all reasonable care and skills of the Contractor of such Work in accordance with the generally accepted standards for performance of such Work.
5.9 Ենթադրվում է, որ Կապալառուն ունի ամբողջական պատկերացում իրականացվող Աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ և ունի Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային և այլ պարագաներ, որոնք սահմանված են սույն Պայմանագրում կամ որոնց այլ կերպ հղում է արվում կամ որոնք այլ կերպ անհրաժեշտ են նման Աշխատանքների կատարման համար:	5.9 The Contractor shall be deemed to have full knowledge of the extent and nature of the Work and to be allowed for all items of work shown upon, described by or referred to in this Contract or which are otherwise necessary to perform such Works.
5.10 Սույն Պայմանագրի 5.1-5.10 կետերի պահանջների չկատարումը կարող է հանգեցնել Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի դադարեցման:	5.10 Non-fulfilment of the requirements mentioned in Clauses 5.1-5.10 shall be a ground for unilateral termination of the Contract by Client.
6. Աշխատանքի Ընդունումը	**6. Acceptance of the Work**

6.1 Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ ստուգել Կապալառուի կատարած Աշխատանքի ընթացքը և որակը Աշխատանքի կատարման ընթացքում առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը: Այդպիսի հսկողության իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելիս Պատվիրատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կապալառուին:	6.1 The Client shall be entitled to check the process and the quality of the Work during performance by the Contractor at its discretion without interfering Contractor's activity. Should deficiencies be discovered as a result of such inspection, the Client shall immediately inform the Contractor.
6.2 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Աշխատանքը ընդունելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար:	6.2 The Client shall be entitled to refuse acceptance of Work and to request reimbursement of the damages caused thereby, if the Contractor does not start performance of the Work on time or performs the Work so slowly that its termination on time becomes impossible.
6.3 Պատվիրատուի կողմից Աշխատանքի ստուգման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուն պարտավոր է վերացնել հայտնաբերված թերությունները և համապատասխանեցնել Աշխատանքը Պատվիրատուի պահանջներին 5 (հինգ) օրվա ընթացքում:	6.3 In case deficiencies are discovered by the Client during checking of the Work, the Contractor shall eliminate the discovered deficiencies and comply the Work with the requirements of the Client within 5 (five) days.
6.4 Աշխատանքի արդյունքի ստուգման արդյունքում սույն Պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուի հետ կազվում է Թերությունների Ակտ, որտեղ նշվում է, որ Աշխատանքը ընդունված է վերապահումով: Այդպիսի ակտը համարվում է թերությունների ակտ, որտեղ սահմանվում են Աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները և դրանց վերացման ժամկետները, եթե Պատվիրատուն պահանջում է թերությունների վերացում:	6.4 In case of revealed deficiencies, a Deficiency Protocol shall be executed with the Contractor defining that the Work has been accepted with reserves. Such Protocol shall be deemed as a deficiency act, where should be defined the deficiencies discovered in the Work result and the terms for their elimination if the Client requests elimination of the deficiencies.
6.5 Թերությունների վերացումից հետո Վերջնական Ընդունման-հանձնման Ակտը հաստատվում և երկկողմանի ստորագրվում է Կողմերի կողմից՝ հաստատելով Աշխատանքի ընդունումը:	6.5 After elimination of all deficiencies, Final Acceptance Protocol shall be approved and bilaterally signed by the Parties certifying the acceptance of Work.
7. Թերությունների Վերացումը	**7. Elimination of Deficiencies**
7.1 Գործող օրենսդրության և/կամ սույն Պայմանագրի խախտմամբ Աշխատանքի կատարման կամ Աշխատանքի թերություններով կամ ոչ ամբողջական կատարման, որոնք դարձրել են Աշխատանքի արդյունքը օգտագործման համար ոչ պիտանի կամ Աշխատանքի ոչ ամբողջական կամ թերի կամ թերությամբ կատարման դեպքում Կապալառուն պարտավոր է Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի ընթացքում, որը չպետք է գերազանցի 5 (հինգ) օրը անվճար նորից կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի թերությունները: Աշխատանքի պատշաճ կատարման համար Կապալառուին	7.1 In case the Work is performed with breach of the applicable legislation and/or this Contract or with deficiencies or partially, which have made the Work result unsuitable for use, the Contractor shall perform the Work again or eliminate the deficiencies of the Work performed free of charge, within the term, agreed between the Parties, which in no case shall exceed 5 (five) days. The mentioned term provided to the Contractor for proper performance of the Work, does not release the Contractor from the liability to pay the penalties, provided in this Contract. Should the Contractor within the mentioned term

տրամադրված վերոնշյալ ժամկետը վերջինիս չի ազատում սույն Պայմանագրով սահմանված տույժերը վճարելու իր պարտավորությունից: Եթե վերոնշյալ ժամկետում Կապալառուին չի հաջողվում նորից պատշաճ կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի մեջ հայտնաբերված թերությունները կամ չի հաջողվում վերացնել դրանք ամբողջությամբ կամ եթե դրանք էական կամ չվերացող են, Պատվիրատուն բացառապես իր հայեցողությամբ իրավասու է՝	again fail to eliminate the deficiencies revealed or if such deficiencies are essential and cannot be eliminated, the Client shall be entitled, at its sole discretion, to:
7.1.1 Կապալառուից պահանջել Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.1 Request the Contractor to perform the Work in accordance with this Contract within the reasonable term, defined by the Client and to pay a penalty in the amount of 0.1% of the total price for each delayed day, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.2 հրաժարվել չկատարված Աշխատանքի ընդունումից և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.2 refuse acceptance of the non-performed Work and request to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.3 պահանջել համաչափ նվազեցնելու Աշխատանքի համար սահմանված գինը և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.3 to request to reduce proportionally the price defined for the Work and to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.4 պահանջել հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն.	7.1.4 request to reimburse the expenses incurred by the Client to eliminate the deficiencies and to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused, in accordance with this Contract and the applicable legislation.
7.2 Պատվիրատուն իրավասու է նաև Կապալառուի հաշվին և ռիսկով անձամբ կամ իր կողմից ընտրված երրորդ անձի միջոցով պատշաճ տեսքի բերել կատարված Աշխատանքը կամ ավարտին հասցնել դրա կատարումը: Կապալառուն պարտավոր է այս հարցում աջակցել Պատվիրատուին և նրան տրամադրել այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:	7.2 The Client shall be entitled at its discretion itself or through a third person at Contractor's risk and expense complete the Work. The Contractor shall assist the Client therein and notably hand over all documents necessary for that purpose.
7.3 Եթե կատարված Աշխատանքի միայն մի մասն է թերի, ապա Պատվիրատուն իր հայեցողությամբ իրավասու է ընդունել Աշխատանքի միայն այն մասերը, որոնք զերծ են թերություններից՝ համամասնորեն վճարելով դրանց համար:	7.3 If only part of the Work performed is defective, the Client shall be entitled at its discretion accept only those parts that are free from defects and pay proportionally for them.

7.4 Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Աշխատանքների որակի և անխափան շահագործման երաշխիքային ժամանակահատվածը կազմում է, 18 ամիս՝ շահագործման հանձնելու օրվանից:	7.4 T The warranty period for the quality and uninterrupted operation of the Works that are the subject of this Contract shall be 18 months from the date of commissioning.
7.5 Երաշխիքային ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից շահագործման հանձնելու և Ընդունման-Հանձնման Ակտը Պատվիրատուի կողմից ստորագրման ամսաթվից: Երաշխիքային վերանորոգման ընթացքը չի հաշվարկվում երաշխիքային ժամկետի մեջ:	7.5 The Warranty Period of the Works should start from the Date of commmisioning and signing the Acceptance Protocol. The Warranty Period of the Works with Deficiencies is prolonged for the period within which the Goods cannot be used due to discovered Deficiencies.
7.6 Երաշխիքային ժամկետի ընթացքում Կապալառուն պարտավոր է վերացնել Աշխատանքի ցանկացած տեսակի, ձևի, բնույթի Թերություն:	7.6 Within Warranty Period the Contractor is obliged to eliminate Deficiencies of any kind, nature, form of the Works.
7.7 Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ Թերությունների ուղղումը Երաշխիքային Ժամկետի ընթացքում իրականացվում է առանց որևէ լրացուցիչ վճարի:	7.7 The correction of the Deficiencies within the Warranty period is carried out at no cost.
7.8 Երաշխիքային ժամկետի ընթացքում Թերությունների վերացումը իրականացվում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրում:	7.8 The elimination of the Deficiencies within Warranty period is to be done within reasonable timeframe, but no more than within 15 days.
8. Ժամկետ	**8. Term**
8.1 Աշխատանքի կատարման ժամկետը սահմանվում է 5 /հինգ/ ամիս է Պայմանագրի երկկողմանի ստորագրման պահից:	8.1 The term for performance of the Work is 5 (five) months from bilateral signature date of the Contract.
9. Գաղտնիությունը	**9. Confidentiality**
9.1 Կապալառուն համաձայնում է (i) օգտագործել Գաղտնի Տեղեկատվությունը միայն սույն Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու նպատակով և (ii) պահել Գաղտնի Տեղեկատվությունը գաղտնի և չբացահայտել այն ամբողջությամբ կամ մասնակի որևէ անձի առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:	9.1 Contractor agrees to (i) use the Confidential Information solely for the purpose of conducting the works according to this contract and (ii) keep the information confidential and not disclose it, in whole or in part, to any person without the prior written consent of the Client.
